«Հաստատում եմ»

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի ծովակալ

Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոցի

Տնօրեն ______ Տ. Հովսեփյան

«16» 10 2023 թ.

[illegible]

# ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

Լոռի — Վանաձոր

մարզ — համայնք

ծովակալ Իսակովի անվան թիվ 23 դպրոց

ուսումնական հաստատության անվանումը, դասարանը

IV Բ

Թամարա Մասիսի Ղազարյան

դասարանի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը

2023-2024 ուսումնական տարի

# ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՒԼԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*Ուսումնական տարվա սկիզբ*

1. Վերստուգել կամ կազմել աշակերտների անվանացանկը:
2. Վերստուգել կամ կազմել դասարանի սոցիալական անձնագիրը:
3. Սպառիչ տեղեկություններ հավաքել աշակերտների ՝ լրացուցիչ կրթական հաստատություններում մասնակցության մասին:
4. Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլան:

*Ամենօրյա աշխատանքներ*

1. Էլեկտրոնային մատյանում նշել բացակաները:
2. Հետևել կարգապահությանը:
3. Հետևել հերթապահությանը դասարանում:

*Շաբաթվա աշխատանքներ*

1. Անցկացնել դասղեկական ժամեր:
2. Կատարել այլ պլանավորված աշխատանքներ:

*Ամենամսյա աշխատանքներ*

1. Նախապատրաստել և կազմակերպել սովորողների մասնակցությունը դպրոցական գործընթացներին:
2. Օգնել դասարանական խորհրդին ՝ ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը:
3. Դուրս բերել սովորողների բացակայությունները և գնահատականները:
4. Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարից , ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքներում:
5. Դուրս բերել նույն առարկայից 3 և ավելի անբավարար գնահատական ստացած սովորողների անունները:
6. Իրականացնել դիտարկումներ ուղված սովորողների մեջ ԿԱՊԿ ունեցողների բացահայտմանն և մասնակցություն գնահատմանը և ԱՈՒՊ –ների մշակմանը:
7. Դժվար դաստիարակվող աշակերտների բացահայտում, համապատասխան կանխարգելիչ և շտկողական աշխատանքներ՝ ընտանիք-դպրոց –հոգեբան կապի միջոցով:

## Դասարանի ղեկավարը (այսուհետ ՝ դասղեկ) , իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝

1. դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին ՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.
2. մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատում պայմանների կյանքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.
3. նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.
4. անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.
5. իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում է սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային, էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողի խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

# ԿՐԹԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** (*դասարանի ընդհանուր բնութագիրը)* – 4-րդ բ դասարանում սովորում է 34 աշակերտ՝ 20 տղա և 14 աղջիկ: Աշակերտներն աչքի են ընկնում աշխույժ, ակտիվ բնավորությամբ: Դասարանում տիրում է առողջ , ընկերական, փոխօգնության մթնոլորտ: Աշխատանք է տարվում հիգիենայի պահպանման, լսելու, խոսելու կուլտուրան բարձրացնելու ուղղությամբ:

2. **Ռազմա – հայրենասիրական դաստիարակություն** – Ծանոթացնել մեր խորհրդանիշներին, ամեն երկուշաբթի դասն սկսել օրհներգով: Ծանոթացնել հայ ազատամարտիկներին, դպրոցից զոհված նախկին սաներին, ծաղիկներ դնել աղբյուր հուշաղբյուրին, ծանոթացնել ծովակալ Իսակովի կյանքին և գործունեությանը: Երեխաներին հասկացնել, որ հերոսություն է ոչ միայն կռվելը, այլև լավ սովորելը, աշխատելը: Մանրամասն տեղեկություններ հաղորդել դրոշի, հիմնի և զինանշանի մասին:

3. **Ֆիզիկական դաստիարակություն** – Զրույց մարմնակրթության, սպորտի նշանակության և կարևորության մասին: Մասնակից կլինեն դպրոցի սպորտային միջոցառումներին, մրցույթներին: Ֆիզկուլտուրայի դասաժամերին երեխաներին մասնակից դարձնել շարժախաղերին: Զրույց անցկացնել «Առողջ մարմնում՝ առողջ հոգի» թեմայով:

4. **Աշխատանքային դաստիարակություն** – Դասարանում սահմանել ամենօրյա հերթապահություն, կազմակերպել շաբաթօրյակներ դասարանում և դպրոցամերձ տարածքում: Տանը օգնեն ծնողներին տնային գործերում, հավաքեն իրենց աշակերտական անկյունը և հարդարեն անկողինը: Բարձրացնել աշակերտի պատասխանատվությունը հանձնարարված գործի նկատմամբ:

5. **Հոգևոր դաստիարակություն** – Ծանոթացնել տարվա մեջ նշվող եկեղեցական տոներին, դրանց էությանն ու նշանակությանը: Լրացուցիչ տեղեկություններ հաղորդել եկեղեցիների, վանքերի մասին, կազմակերպել էքսկուրսիաներ դեպի մոտակա տեսարժան վայրեր: Սովորեցնել ճիշտ պահվածքը և վարվելաձևը եկեղեցում:

6. **Գեղագիտական դաստիարակություն** – Ամենօրյա աշխատանք տանել կիրթ վարվելաձևի և քաղաքավարության կանոնների շուրջ: Գեղագիտական դաստիարակության շրջանակներում օգտագործել ԿԳՄՍ նախարարության կողմից սովորողներին տրվող աբոնեմենտային տոմսերը՝ այց կազմակերպել թատրոն, թանգարան, պատկերասրահ:

7. **Բնապահպանական դաստիարակություն** – Մշտապես ուշադրություն դարձնել շրջապատի, բնության պահպանմանը: Կազմակերպել զբոսանքներ, բնության դիտարկումներ այգիներում, կարողանալ տեսնել բնության մեջ կատարվող փոփոխությունները: Հասկացնել բնության պահպանման կարևորությունը:

8. **Դպրոց – ընտանիք կապը** – Ուսումնասիրել յուրաքանչյուր աշակերտի ընտանեկան պայմանները, անհրաժեշտության դեպքում օգնել մեթոդական խորհուրդներով, կազմակերպել զրույցներ և ծնողներին ներգրավել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Ծնողական ժողովներին հանդես գալ տարբեր մանկավարժական զեկուցումներով, կազմակերպել քննարկումներ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ

| Ժամկետ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|
| Սեպտեմբեր | Դասարանի ակտիվի ընտրություն (փակ, գաղտնի քվեարկությամբ), հերթապահության կազմում: | դասվար | |
| | Զրույց «Ինչպես անցկացրի ամառային արձակուրդս» թեմայով: | | |
| | Զրույց «Սիրենք ու մաքուր պահենք մեր քաղաքը» թեմայով: | դասվար | |
| | Լսել երաժշտություն՝ նվիրված սիրելի քաղաքին: | | |
| | Զրույց «Մեր անկախ հայրենիքը 32 տարեկան է» թեմայով: | դասվար | |
| | Խոսել եռագույն դրոշի, զինանշանի մասին, կատարել ՀՀ հիմնը: | | |
| | Զրույց «Մեր դպրոցի ճանապարհը և նոր երթուղիները» թեմայով: | դասվար | |
| | Պատմել այն թաղամասի մասին, որտեղ գտնվում է դպրոցը: | | |
| Հոկտեմբեր | Զրույց «Ի՞նչ է պատասխանատվության զգացումը» թեմայով: | դասվար | |
| | Անցկացնել զրույց «Դպրոցս կրում է ծովակալ Իսակովի անունը» | դասվար | |
| | թեմայով: Տեղեկություններ հաղորդել մեծ ծովակալի մասին: | | |
| | Ծանոթացում դպրոցի տարհանման պլանին: Տալ տեղեկություն, | դասվար | |
| | թե ինչպես վարվել տագնապի ազդանշանի դեպքում: | | |
| Նոյեմբեր | Զրույց «Ճիշտ օգտվել օրվա ռեժիմից» թեմայով: | դասվար | |
| | «Աշնանային պարահանդես» զրույցն անցկացնել մոտակա | դասվար | |
| | այգում, տեսնել բնության մեջ կատարվող փոփոխությունները: | | |
| | Կոնֆլիկտների հաղթահարում՝ «Արի հաշտվենք» պատմության | դասվար | |
| | ընթերցում և քննարկում: | | |
| | Երեխայի իրավունքներ՝ «Երեխայի իրավունքների պաշտպանը» | դասվար | |
| | պատմության ընթերցում և քննարկում: | | |
| | Զրույց «Գյուղ կանգնի՝ գերան կկոտրի» թեմայով: | դասվար | |
| | Համագործակցություն | | |
| Դեկտեմբեր | Ճանապարհային երթևեկություն՝ վարորդի աշխատանքը: Տալ | դասվար | |
| | տեղեկություններ վարորդի պարտականությունների մասին: | | |

| Ժամկետ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|
| | Դասագրքերի և աշակերտական պիտույքների վիճակի | դասվար | |
| | ստուգում: Դասարանական անկյան ձևավորում, դասասենյակի | | |
| | նախապատրաստում Նոր տարվան: | | |
| | Նոր տարվան նվիրված ներկայացման դիտում և քննարկում: | դասվար | |
| | Ուրախ հանդեսի կազմակերպում: | | |
| | II կիսամյակ | | |
| Հունվար | Զրույց «Հայկական բանակ» թեմայով: Կարևորել գիտելիքը, | դասվար | |
| | գիտությունը, բացատրել, որ նոր տեխնիկա և զենքեր ստեղծելու | | |
| | համար պետք է լավ սովորել: | | |
| | Էքսկուրսիա դեպի մոտակա պուրակ՝ դիտելու ձմեռային | դասվար | |
| | բնապատկերներ, պատրաստելու ձնեմարդ /եթե ձյուն լինի/: | | |
| | Զրույց «Ինչու՞ է անհրաժեշտ օդափոխել սենյակը» և «Գազը | դասվար զինղեկ | |
| | վտանգավոր կարող է լինել, եթե չգիտես օգտվելու կանոնները»: | | |
| | Սուր կենցաղային իրադրություններ, դրանց ազդեցությունները: | դասվար զինղեկ | |
| Փետրվար | Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային | դասվար զինղեկ | |
| | վտանգավոր /սուր / իրադրություններում | | |
| | Ինքնօգնության և փոխօգնության տարրերը՝ կենցաղային | դասվար զինղեկ | |
| | իրադրություններում ստացած վնասվածքների դեպքում: | | |
| | «Գիրքը մեր լավագույն բարեկամն է» թեմայով զրույցն անցկացնել | դասվար | |
| | դպրոցի գրադարանում: | գրադարա-նավար | |
| | Արտակարգ իրավիճակների մասին ազդարարումը և բնակչության | դասվար զինղեկ | |
| | գործողությունների հաջորդականությունը: | | |
| Մարտ | Զրույց՝ նվիրված մայրիկների տոնին: Բացիկների պատրաստում | դասվար | |
| | մայրիկների համար; | | |

| | | | |
|---|---|---|---|
| | Զրույց «Սեռային խնդիրներ» թեմայով: | դասվար | |
| | Զրույց «Անձնական հիգիենա» թեմայով՝ ինչպես խնամել մազերը, | դասվար | |
| | մաշկը, ատամները, հագուստը, կոշիկները: | | |
| Ապրիլ | «Գարունը մեր քաղաքում», «Մեր շրջապատի բնության հրաշքները» | դասվար | |
| | թեմաներով զրույց: Զրույցն անցկացնել բնության գրկում: | | |
| | Զրույց «Օգնենք մեր թևավոր բարեկամներին» թեմայով: | դասվար | |
| | Պատրաստել թռչնաբներ: | | |
| | Զրույց «Ի՞նչն է լավ , ինչը՝ վատ» թեմայով: Դասասենյակի մաքրում, | դասվար | |
| | դասագրքերի վերանորոգում: | | |
| | Զրույց 1915թ եղեռնի մասին; | դասվար | |
| Մայիս | Զրույց «Համակարգիչն ընկե՞ր է, թե՞ թշնամի» թեմայով: | դասվար | |
| | Էքսկուրսիա դեպի մոտակա պուրակ՝ գարնան զարթոնքը դիտելու: | | |
| | Զրույց «Բարեկիրթ վարվեցողություն տանը, դպրոցում, | դասվար | |
| | հասարակական վայրերում» թեմայով: | | |
| | Անցկացնել զրույց «Ինչպես ճիշտ կազմակերպել երեխաների | դասվար | |
| | ամառային հանգիստը» թեմայով: Տալ ծրագրային գրականության | | |
| | ցանկը, հանձնարարել կատարել ամառային առաջադրանքները: | | |

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

| Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը | Անցկացվող միջոցառման (դասախոսություն, զրույցներ, քննարկումներ և այլն) թեման | Անցկացման վայրը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 06.09 | Զրույց-քննարկում «Ինչպես անցկացրի ամառային արձակուրդս» | դասասենյակ | դասվար |
| 13.09 | Զրույց-քննարկում «Սիրենք ու մաքուր պահենք մեր քաղաքը» | դասասենյակ | դասվար |
| 20.09 | Զրույց «Մեր  անկախ հայրենիքը  32 տարեկան է»: Ծանոթացնել ՀՀ խորհրդանշաններին: | դասասենյակ | դասվար |
| 27.09 | Զրույց «Մեր դպրոցի ճանապարհը և նոր երթուղիները» | դասասենյակ | դասվար |
| 04.10 | Զրույց-քննարկում «Ի՞նչ է պատասխանատվության զգացումը» | դասասենյակ | դասվար |
| 11.10 | Զրույց «Դպրոցս կրում է ծովակալ Իսակովի անունը»: Տեղեկություններ հաղորդել Իսակովի մասին: | դասասենյակ | դասվար |
| 18.10 | Էքսկուրսիա դեպի մոտակա պուրակ | պուրակ | դասվար |
| 25.10 | Զրույց «Ճիշտ օգտվել օրվա ռեժիմից»: Կազմել օրվա ռեժիմի նմուշ: | դասասենյակ | դասվար |
| 08.11 | Զրույց «Աշնանային պարահանդես» | դասասենյակ | դասվար |
| 15.11 | Զրույց-քննարկում «Արի հաշտվենք» | դասասենյակ | դասվար |
| 22.11 | Զրույց «Իմ իրավունքներն ու պարտականությունները»: Ծանոթացնել իրենց իրավունքներին ու պարտականություններին: | դասասենյակ | դասվար |
| 29.11 | Զրույց «Գյուղ կանգնի՝ գերան կկոտրի» | դասասենյակ | դասվար |
| 06.12 | Ճանապարհային երթևեկություն՝ վարորդի աշխատանքը: Անվտանգ երթևեկության կանոնների հիշեցում: | դասասենյակ | դասվար |
| 13.12 | Զրույց «Ո՞ր մասնագիտությունն է ինձ դուր գալիս և ինչո՞ւ»: Թվել մասնագիտություններ, ասել առավելություններն ու թերությունները: | դասասենյակ | դասվար |
| 20.12 | Զրույց-քննարկում «Ուրախ դիմավորենք Ամանորը» | դասասենյակ | դասվար |
| 10.01 | Զրույց «Հայկական բանակը»: Տեղեկություններ հաղորդել բանակի կազմավորման, նշանակության մասին: | դասասենյակ | դասվար |
| 17.01 | Հայկական մուլտֆիլմերի դիտում, քննարկում, հերոսների բնութագրում | դասասենյակ | դասվար |
| 24.01 | Զրույց-քննարկում «Գազը վտանգավոր կարող է լինել» | դասասենյակ | դասվար |
| 31.01 | Ծանոթություն սուր կենցաղային իրադրություններին | դասասենյակ | դասվար |
| 07.02 | Սուր կենցաղային իրադրությունների ազդեցությունը | դասասենյակ | դասվար |

| | | | |
|---|---|---|---|
| 14.02 | Աշակերտների տարրական գործողությունները կենցաղային վտանգավոր /սուր / իրադրություններում | դասասենյակ | դասվար |
| 21.02 | Զրույց-քննարկում «Գիրքը մեր լավագույն բարեկամն է»: Ընթերցել, բեմականացնել որևէ հեքիաթ: | գրադարան | դասվար, գրադարանավար |
| 28.02 | Արտակարգ իրավիճակների մասին ազդարարումը և բնակչության գործողությունների հաջորդականությունը | դասասենյակ | դասվար |
| 06.03 | Զրույց «Մարտի 8»: Պատրաստել բացիկներ մայրիկների համար: | դասասենյակ | դասվար |
| 13.03 | Զրույց-քննարկում «Սեռային խնդիրներ» | դասասենյակ | դասվար |
| 20.03 | Զրույց-քննարկում «Անձնական հիգիենա» | դասասենյակ | դասվար |
| 03.04 | «Գարունը մեր քաղաքում», «Մեր շրջապատի բնության հրաշքները» թեմաներով զրույց | պուրակ | դասվար |
| 10.04 | Զրույց «Օգնենք մեր թևավոր բարեկամներին»: Թռչունների համար բույն պատրաստել: | դասասենյակ | դասվար |
| 17.04 | Զրույց-քննարկում «Ի՞նչն է լավ , ինչը՝ վատ» | դասասենյակ | դասվար |
| 24.04 | Զրույց՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը | դասասենյակ | դասվար |
| 01.05 | Զրույց-քննարկում «Համակարգիչն ընկե՞ր է, թե՞ թշնամի» | դասասենյակ | դասվար |
| 08.05 | Էքսկուրսիա դեպի մոտակա պուրակ | պուրակ | դասվար |
| 15.05 | Զրույց «Բարեկիրթ վարվեցողություն»: Ծանոթացնել բարեկիրթ վարվեցողության կանոններին: | դասասենյակ | դասվար |
| 22.05 | Զրույց-քննարկում «Ինչպես ճիշտ կազմակերպել երեխաների ամառային հանգիստը» | դասասենյակ | դասվար |

# ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

| Ժամկետ | Աշխատանքի բովանդակությունը | Կատարող | Նշումներ |
|---|---|---|---|
| Սեպտեմբեր | 1.Կազմակերպչական հարցեր<br>2. Ծնողխորհրդի ընտրություն<br>3. Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում:<br>4. Հոգեբանական, կարգապահական խնդիրների դիտարկում, քննարկում և լուծման տարբեր եղանակների կիրառում: | Դասվար հոգեբան | |
| Հոկտեմբեր | 1. Երկամսյակի ամփոփում<br>2. Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում: | Դասվար | |
| Դեկտեմբեր | 1. Ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի քննարկում:<br>2. Հոգեբանական, կարգապահական խնդիրների քննարկում և լուծման տարբեր եղանակների կիրառում:<br>3. I կիսամյակի ամփոփում: | Դասվար | |
| Մարտ | 1. Կազմակերպչական հարցերի քննարկում:<br>2. Առաջադիմության հարցերի քննարկում:<br>3. 4-րդ դասարանի գիտելիքների ստուգմանը նախապատրաստվելու հարցերի քննարկում: | Դասվար | |
| Մայիս | 1. II կիսամյակի բացակայությունների ամփոփում:<br>2. Գնահատման տարեկան ամփոփում:<br>Առաջադիմության հարցերի քննարկում<br>3. Ընթացիկ հարցեր | Դասվար | |
| Հունիս | 1. 2023-2024 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների, 4-րդ դասարանի գիտելիքների ստուգման ամփոփում:<br>2. Ընթացիկ հարցեր | Դասվար | |